

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՆՈՐ ՕՁԱՄ

ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՎԱԾ ԲՆԱԿԱՐԱՆԸ ՆՈՐ ԷՉ` ՀԱՅ-ՎՐԱՅԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՊԵՐԻ ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

(Սկիզբը` 1-ին էջում)

Վրաստանի անկախացումից հետո հայ համայնքից օտարված Ամենայն հայոց բանաստեղծի տան ճակատագիրը օրհասական էր. մասնավոր սեփականատիրոջ պատկանող չգործող գրադարանային հատված էլ ժառանգներին մնացած կիսափուլ բնակարան:



Թումանյանի տունն իր օրինական սեփականատիրոջը հանձնվեց այն ժամանակվա Հայաստանի գրողների միության նախկին նախագահ, երջանկահիշատակ Լեւոն Ամանյանի անդուլ ջանքերով, ուն աջակցից դարձան Գյումրիի նախկին քաղաքապետ, այժմ Հայաստանի Ազգային ժողովի պատգամավոր Վարդան Դուկասյանը և IdeA հիմնադրամի համանախագահ Ռուբեն Վարդանյանը: Ամբողջական տեսքով Վիրահայոց թեմին նվիրաբերված տան վերանորոգությունը, բարեկարգումը և կահավորումն իրականացվեց Ջինիշյան հիշատակի և IdeA հիմնադրամների ու թեմի միջոցներով:

Ամճանաչելի տեսք ստացած Հովհաննես Թումանյանի տան բացման հանդիսությանը մասնակցեցին Մայր Աթոռի պատվիրակությունը, Վրաստանի, Հայաստանի Հանրապետության պետական, քաղաքական գործիչներ, դիվանագետներ, հյուրեր արտասահմանից Ռուսաստանից, Ղազախստանից, Հայաստանի տարբեր քաղաքներից ու շրջաններից, համայնքային կառույցների ղեկավարներ, թբիլիսիսի մտավորականներ:

Կենտրոնի բացման արարողությունը սկսվեց հայ գրողների և հասարակական գործիչների խոջիվանքի պանթեոնում Հովհաննես Թումանյանի շիրմին ծաղկեպսակների զետեղմամբ և Վիրահայոց թեմի ու Տավուշի թեմի առաջնորդների նախագահությամբ կատարված հոգեհանգստյան կարգով:

«Հովհաննես Թումանյանի տուն» գիտական, մշակութային կենտրոնի ժապավենը կտրեցին Հայաստանի Ազգային ժողովի պատգամավոր Վարդան Դուկասյանը, IdeA հիմնադրամի գործադիր տնօրեն Էդգար Մանուկյանը, Ջինիշյան հիշատակի հիմնադրամի ԱՄՆ-ի մայր գրասենյակի գործադիր տնօրեն Էլզա Մանասյանը: Հոգեւոր դասի մասնակցությամբ նորաբաց կենտրոնում կատարվեց

տնօրինքի արարողություն:

«Հովհաննես Թումանյանի տուն» գիտական, մշակութային կենտրոնի ժապավենը կտրեցին Հայաստանի Ազգային ժողովի պատգամավոր Վարդան Դուկասյանը, IdeA հիմնադրամի գործադիր տնօրեն Էդգար Մանուկյանը, Ջինիշյան հիշատակի հիմնադրամի ԱՄՆ-ի մայր գրասենյակի գործադիր տնօրեն Էլզա Մանասյանը: Հոգեւոր դասի մասնակցությամբ նորաբաց կենտրոնում կատարվեց տնօրինքի արարողություն:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի



օրինության և բարեմաղթանքի ուղերձն ընթերցեց Մայր Աթոռի պատվիրակության ղեկավար, Տավուշի թեմի առաջնորդ Գերաշնորհ Տեր Բագրատ եպիսկոպոս Գալստանյանը, ՀՀ Սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանի, Վրաստանում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Յուրի Վարդանյանի շնորհավորագրերը:

Տունը համայնքին վերադարձնելու և վերանորոգական ու բարեկարգման աշխատանքների վավերագրությունը ցուցադրվեց տեսաֆիլմի միջոցով:

Այնուհետև ողջունի խոսքով հանդես եկան Երեւանի Հովհաննես Թումանյանի տուն-թանգարանի տնօրեն Նարինե Թովիսկյանը, Հայաստանի գրողների միության նախագահ Էվալդ Միլիտոնյանը, վաղամեռիկ Լեւոն Ամանյանի որդին «Արմենպրեսի» տնօրեն Արամ Անանյանը, Վրաստանի գրողների միության նախագահ Մաղվալ Գոնաշվիլին, Վրաստանի հայ գրողների «Վերնա-

տուն» միության նախագահ ժորա Սնիշյանը, բանաստեղծ-թարգմանիչ Գիլի Շահնազարը, Վիրահայոց թեմի «Հայարտուն» կենտրոնի տնօրեն Լեւոն Չիդիյանը:

Ապա, Ամենայն հայոց բանաստեղծի տունը ազգային նպատակների ծառայեցնելու կապակցությամբ, շնորհավորանքի խոսք ասացին բարերարները, նվիրատուները: Մեծնակատարուհի Աննա Բաղայանի երգը, Լիզա Թորոսյանի և Լեւոն Չիդիյանի ասմունքը` ժաննա Դավթյա-



նի խամաճիկի համադրությամբ, փոխանցեցին այն չմարող սերը, որը տածում է ժողովուրդն իր մեծ բանաստեղծի նկատմամբ:

Միջոցառումն ամփոփեց Վիրահայոց թեմի առաջնորդը: Գերաշնորհ Տեր Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը երախտագիտության խոսքեր ուղղեց բոլոր բարերարներին, աջակցիցների` ազգամեր գործ կատարելու և Թումանյանի պատմական տունը թբիլիսիսի համայնքին վերադարձնելու համար և նվիրեց թբիլիսիսի ճանաչված նկարիչներ Մերուժան Շահունյանի և Թենգիզ Միկոյանցի նկարներից:

Ուշագրավ է, որ դատարկածեռն չէին ներկայացել նաև հյուրերը: Կենտրոնի բացումը նվերներով շնորհավորեցին Ջահի հոգաբարձուների խորհրդի նախագահ Սու Սահակյանը, Թբիլիսիի թիվ 104 դպրոցի ուսուցչուհի, այսօր մոսկվայաբնակ Լամարա Աթոյանը, Վալիկո Առաքելյանը և ուրիշներ:

Մեծն Թումանյանի տանը հարիր նորաբաց կենտրոնում այսուհետ ծավալվելու է գրական, գիտական, կրթամշակութային գործունեություն, սրահներից մեկը կրելու է Լեւոն Ամանյանի անունը, որտեղ տեղի են ունենալու հայ և վրաց գրողների հանդիպումներ, գրքերի քննարկումներ, կենտրոնում ստեղծվելու է ազգագրության ուսումնասիրության և զարգացման, արվեստի գործիչների մշակութային կապերի օջախ, տիկնիկային թատրոն, ՀԲԸՄ վիրտուալ համալսարանի մասնաճյուղ, վիրահայության հոգեւոր, մշակութային ժառանգության թանգարան, գրադարան:

ՍՈՒՄԱՆԱ ԽԱՉԱՏՐՅԱԼ

ՊԵՏԱԿԱՆ ԼԵՁՈՒ

ՈՂՋՈՒՆԵԼԻ ՆԱԽԱՁԵՆՈՒԹՅՈՒՆ

(Սկիզբը` 1-ին էջում)

Վրաստանի կրթության և գիտության փոխնախարար Լիա Գիգաուրին, հաշտեցման և քաղաքացիական իրավահավասարության հարցերով պետնախարարի առաջին տեղակալ Պետրե Կանկավան, Ջուրաբ ժվանիայի անվան պետական վարչարարական դպրոցի տնօրեն Թեթեան Մախարաշվիլին և Վրաստանի խորհրդարանի պատգամավոր Սամվել Մանուկյանը, Ախալքալաքի հանրակրթական ռեսուրս կենտրոնի ղեկավար Թերեզա Չիքիանը և տեղական ինքնակառավարման ներկայացուցիչները:

Իրենց տպավորությունները մեզ հետ կիսեցին.

Լիա Գիգաուրի. - Ջուրաբ ժվանիայի անվան դպրոցը նախապատրաստել է շարժական 160 խումբ, որպեսզի այնտեղ, որտեղ առկա է լեզվի ուսուցման պա-

հանջարկը, շահագրգռված անձանց հնարավորություն տրվի տեղում ստանալ հանրակրթական սպասարկում: - Մենք ներկա գտնվեցինք ման խմբերից մեկի դասավանդում: Վրաստանի պատմության մեջ առաջին անգամ հոգեւոր անձինք վիրահայոց թեմի ներկայացուցիչները, ցանկություն հայտնեցին, որ հավատացյալների հետ միասին ուսուցանեն պետական լեզուն: Դա, իրոք, անսխալապես իրադարձություն է:

Պետրե Կանկավա. - Ողջունում ենք հոգեւորականների ու նրանց ընտանիքի անդամների ցանկությունը պետական լեզվի ուսուցման դասընթացի բացման և այնպիսի հնարավորության ընձեռնան կապակցությամբ, ինչը համապատասխանում է յուրաքանչյուր քաղաքացու շահերին և` նպաստում նրանց լիարժեք ինտեգրմանը: Դա հաջողության կողմ տանող ճանապարհ է: Մենք ձգտում ենք ստեղծել պայման-

ներ, որպեսզի վրացերենի ուսուցումը դառնա առավելագույնս մատչելի, և հենց այդ նպատակով Ախալքալաքիում Վիրահայոց թեմի Սամյի-Ջավախթիի առաջնորդական փոխանորդությունում բացվեցին պետական լեզվի ուսուցման դասընթացներ: Ցանկանում են հաջողություններ մտադրել, և համոզված են, որ դասընթացները շատ ունկնդիրներ կունենան: Դա հիանալի օրինակ է, որպեսզի ազգային մյուս փոքրամասնությունների ներկայացուցիչները դրան հետեւեն:

Տեր Տիգրան քահանա Մխիթարյան (Դիլիսկայի և հարակից գյուղերի հոգեւոր հովիվ) - Մենք ապրում ենք Վրաստանում և գտնում են, որ բոլոր այստեղ բնակվողները պետք է տիրապետեն պետական լեզվին: Վրացերեն սկսել են սովորել ինչպես թեմի հոգեւորականները, այնպես էլ ընտանիքների անդամները, ինչպես նաև տարբեր դպրոցների ուսու-



Լիա Գիգաուրին, Պետրե Կանկավա, Սամվել Մանուկյանը (վերջին շարքում) վրացերենի դասախոսումը

ցիչներ, աշակերտներ, քաղաքացիներ: Մեր ցանկությունն է, որ ծրագրեր երկարաժամկետ նախագիծ դառնան: Մենք կաջակցենք, որպեսզի յուրաքանչյուր քաղաքացի լավ տիրապետի պետական լեզվին և արագ ինտեգրվի վրաց հասարակայնությանը: Նույն օրը Լիա Գիգաուրին և Պետրե Կանկավան, Սամյի-Ջավա-

լախթիի նախագապետ Ալակի Մաչուտանի ուղեկցությամբ, եղան նաև Գումբուրդո գյուղի նորաշեն ժամանակակից դպրոցի շենքում, որ կառուցվել է անհատ բարեգործների նախաձեռնությամբ, և սեպտեմբերի 15-ին դպրոցը հանդիսավորապես կբացի իր դռները:

ԱՐԵՎԻԿ ԱՄՆՈՒԿՅԱԼ

ՈՉ ՎԻԶԱՅԻՆ ՌԵԺԻՄ



ԱՆԱՅՅԵԳՐԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԶՈՐՍ ԱՄԻՍԸ

Արդեն չորս ամիս է (ընթացիկ տարվա մարտի 28-ից), ինչ Վրաստանի քաղաքացիների համար գործում է Եվրամիության երկրների հետ անայցեգրային պայմանակարգը: Վերոնշյալ օրվանից անցած ժամանակահատվածում՝ դյուրացված կարգով Եվրոպա մեկնելու իրավունքից օգտվել է Վրաստանի շուրջ 55 հազար քաղաքացի: Այդ կապակցությամբ, Վրաստանի ներքին գործերի նախարարությունը հրապարակեց անայցեգրային պայմանակարգով սահմանված արտոնություններից օգտվող քաղաքացիների տվյալները եւ

համդես եկավ մասնակի մեկնաբանությամբ:

ՆԳ նախարարության տեղեկատվությամբ, ներկա դրությամբ, առկա տեղեկատվության համաձայն, անայցեգրային պայմանակարգով Եվրամիության երկրներ է մեկնել շուրջ 55 հազար Վրաստանի քաղաքացի: Եռամսյա ժամկետի՝ ավելի ստույգ 90-օրյա ժամկետի սպառումից հետո, Վրաստան չի վերադարձել 3 հազար մարդ: Բնականաբար, արտասահմանում գտնվելու սահմանված ժամկետի խախտման համար, համապատասխան արձագանքել են ինչպես տեղի միգրացիոն ծառայության, այնպես էլ՝ Վրաստանի իրավասու մարմինները: Թեպետ հարկ է նշել, որ արձագանքումը էական արդյունքների դեռեւս չի հանգեցրել: Մասնավորապես, Վրաստանի ՆԳ փոխնախարար Շավվա Խուցիշվիլու հայտարարությամբ՝ 90-օրյա ժամկետի սպառումից հետո՝ հայրենիք չվերադարձած 3 հազար քաղաքացու հարցում չի կարելի միանշանակ նշել, որ խախտում է վավերացվել: Բացառված չէ, որ այդ մարդկանց որոշակի մասը Եվրամիության

երկրներից մեկնել են այնպիսի երկրներ, ում հետ Վրաստանն ունի անայցեգրային պայմանակարգ, եւ դեռեւս այդտեղից չեն վերադարձել: - Չնայած դրան, այդ մարդկանց ներառել ենք հնարավոր ռիսկի խմբի մեջ եւ իրականացնում ենք համապատասխան մոնիտորինգ, ստուգում ենք, թե ով որտեղի՞ց է եկել, ի՞նչ նպատակով եւ այլն,- հայտարարեց փոխնախարարը եւ հավելեց, որ նշանակալի իրավախախտումներ դեռեւս չեն վավերացվել, որոնք կարող էին հանգեցնել այդ երկրներից մեր քաղաքացիների բռնի արտագաղթման: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ետեւում է մնացել ամռան երկուտուկես ամիսը, եւ շատերը դեռեւս օգտվում են ամառային արձակուրդներից, Եվրամիության հետ ազատ առևտրի պայմանագրի գործարկումից հետո՝ այդ երկրներ շատերը մեկնում են գործնական այցով: Փոխնախարարի հավաստմամբ՝ 55 հազարն այնքան էլ մեծ թիվ չէ: «Միաժամանակ, հատկանշական է նաեւ այն, որ,

Ազգային բանկի վերջին տվյալներով, Վրաստանի միջազգային բանկերի կողմից տրված վարկային քարտերով, արտասահմանյան երկրներում ապրիլ-հունիս (հուլիսի տվյալները դեռեւս հանրագումարված չեն) ամիսներին Վրաստանի քաղաքացիների կողմից ծախսվել է ապրիլին՝ 95,8 միլիոն լարի, մայիսին՝ 103,1 միլիոն լարի, հունիսին՝ 112,7 միլիոն լարի: Այսպիսով, երեք ամսվա ընթացքում Վրաստանի քաղաքացիների կողմից արտասահմանում ծախսվել է 311,6 միլիոն լարի: Ստացվում է, որ արտասահմանում գտնվող Վրաստանի քաղաքացիների վարկային քարտով միջինը դուրս է գրվել 5,7 հազար լարի, ինչը կազմում է մոտավորապես 2,8 հազար եվրո: Ավելացնենք, որ դա Եվրոպայի մասշտաբով այնքան էլ պատկառելի գումար չէ, ինչը կրկին վկայում է այն մասին, որ Վրաստանի քաղաքացիների նշանակալից մասը դեռեւս գտնվում է նյութական ոչ բարեկեցիկ իրավիճակում»,- ընդգծեց փոխնախարարը:

Մնում է ավելացնել, որ, Եվրամիության երկրների հետ անայցեգրային պայմանակարգի հաստատումից հետո, տուրօպերատորների գործունեության ծավալները գրեթե կրկնապատկվեցին, ինչը, կարծես թե, հանգեցնելու էր զբոսաշրջության թույլատրագրերի գների նվազեցման: Թեպետ, որքան էլ տարօրինակ լինի, դրանք 15-20 տոկոսով թանկացան: Զբոսաշրջության գործակալությունների ներկայացուցիչների հայտարարությամբ՝ չնայած նրան, որ հյուրանոցների եւ սնվելու, ինչպես նաեւ մյուս սպասարկումների գները մնացել են անփոփոխ, ինքնաթիռի տոմսերի թանկացման պատճառով, զբոսաշրջության փաթեթների սակագներն ավելացվեցին, ինչը ինքնաբերաբար ավելացնում է սպասարկման ծախսերը: Վիճակագրական տվյալներից ելնելով, Եվրոպայի հարավում, առանձնապես, Հունաստանում եւ Կիպրոսում հանգստանալ ցանկացողների թիվը

ՅՈՒՐԻ ԽՈՐԵՆՅԱՆ

ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2922 ՔԱՂԱՔԱՅԻՆԵՐԻ ՍՐԳԵԼԵԼ ԵՆ ՎՐԱՍՏԱՆ ՄՈՒՏՔԸ

Վրաստանի ՆԳ նախարարության վիճակագրական տվյալներով, 2017 թվականի վեց ամսում Վրաստան մուտք գործելու հարցում, մերժում է ստացել 2922 օտարերկրացի: Նույն վիճակագրության համաձայն, սահմանագծում վավերացվել է 7631 իրավախախտում: Ինչպես վկայում է վիճակագրությունը, Վրաստան մուտք գործելու իրավունքը մեծ մասամբ մերժվել է Հնդկաստանի քաղաքացիների համար: Մերժում է ստացել 571 քաղաքացի: Երկրորդ տեղում 492 քաղաքացիներով զբաղեցնում է Թուրքիան, երրորդը՝ Ադրբեջանը՝ 418, ապա Ռուսաստանը՝ 230, Սիրիան՝ 175 եւ Ուզբեկստանը՝ 171:

ՎՐԱՍՏԱՆԻ ԲԱՆՏԵՐՈՒՄ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ 365 ՔԱՂԱՔԱՅԻՆԵՐԻ 35-Ը ԿԱՆԱՅՔ ԵՆ

Այսօրվա դրությամբ, Վրաստանի բանտերում արգելափակված են օտարերկրյա քաղաքացիություն եւ առանց քաղաքացիության 365 անձ, որոնցից 35-ը կանայք են: Վիճակագրական տվյալներով, Վրաստանի բանտերում արգելափակված կանանց թվում 9-ը Ռուսաստանի քաղաքացի է, 5-ը՝ Թուրքիայի: Արգելափակվածների թվում են Բրազիլիայի, Ադրբեջանի եւ Ուկրաինայի՝ 3-ական քաղաքացուհիներ, 2-ական՝ Հարավային Աֆրիկայից եւ Ուզբեկստանից: Վրացական բանտում պատժաժամկետ է կրում քաղաքացիություն չունեցող նաեւ մի կին:

Advertisement for PSP (Prepaid Service Provider) featuring a PSP logo, a DONA group building, a Vitara car, and a PSP 2000 card. Text includes: 30 ԻՐԱՔԱՆՉՅՈՒՐ 10 ԼԱՐԻ ԴԻՄԱՑ ՄՍԱՑԵՔ ԽԱՂԱՐԿՈՒԹՅԱՆ 1 ՏՈՄՍ, (032) 2 40 20 20, www.card.psp.ge, +20 20.

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

12.08.2017. Տոն Շո-ղակաթի՝ Սուրբ Էջմիածնի, ըստ Սուրբ Գրիգոր Լուսավորչի տեսիլքի

ՕԳՈՍՏՈՍ



հետո, կատարվում է խաղողորհմեք: Օրհնվում է նաև տարվա ողջ բերքն ու բարիքը: Հայ եկեղեցին, դարեր շարունակ, խորին հարգանք է Երկյուղածություն է տածում Աստվածամոր հանդեպ՝ շեշտելով Աստծո մայր լինելու հանգամանքը,

13.08.2017. Վերափոխումն Սուրբ Աստվածածնի

Հայ Առաքելական Սուրբ եկեղեցին, մեծ շուքով է հանդիսավորությամբ, նշում է Սուրբ Աստվածածնի Վերափոխման տոնը: Այն Հայ եկեղեցու հինգ Տաղավար տոներից չորրորդն է և՛ Տիրամորը նվիրված տոներից ամենահինը: Աստվածածնի Վերափոխման տոնի օրը, Սուրբ Պատարագից

մաքրակենցաղությունը, անօրինակ խոնարհության ոգին, առաքինի վարքն ու նվիրվածությունը: Իսկ հայ կնոջ համար Սուրբ Կույսը՝ առաքինի, հավատավոր մոր, ընտանեկան սրբության պահպանի մարմնացումն է:

ՏՐԱՆՍՊՈՐՏ

ԼԱՐՍԻ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԱՆՃՈՒՄԱԿԵՏԻ ՌՈՒՄԱԿԱՆ ԿՈՂՄՈՒՄ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԿՈՏԱԿՈՒՄՆԵՐ ԵՆ

Ինչպես տեղեկացրել է Վրաստանի ավտոճանապարհների դեպարտամենտը, Ստեփանծմինդա-Լարս ավտոճանապարհն առանց սահմանափակումների բաց է տրամապորտային բոլոր միջոցների համար, վրացական կողմում ավտոմեքենաների կուտակումներ չկան:

Մեքենաների կուտակումներ են առաջացել Լարսի սահմանային անցակետի ռուսական կողմում: Ըստ տեղեկության, աշխատանքներ են տարվում խնդիրը հնարավորինս շուտ կարգավորելու ուղղությամբ:



Ավելի վաղ, տեղեկատվություն էր տարածվել, որ Դյուսիսային Օսեթիայում ավելի քան 500 ավտոմեքենա խցանման մեջ է հայտնվել: Նրանց մեջ կան նաև Հայաստանի քաղաքացիներ: Իրադրությունը բարդացնում է 40 աստիճան շոգը, որն ավելի ծանր են տանում ծեփերը:

Ռուսական կողմը հավաստիացնում է, որ մեքենաների հետ խցանումների մեջ հերթապահում են նաև բժշկական և փրկարարական բրիգադներ: Սահմանը հատելու համար մեքենաները միջի-

ն հաշվարկումով սպասում են 6 ժամ: Օգոստոսի 10-ին, Լարսիի սահմանային անցումակետում վախճանվել է Վրաստան մեկնող մի քաղաքացի: Նա իրեն վատ է զգացել՝ անցումակետում բազմաժամյա հերթում կանգնելու պատճառով: Բժիշկներին չի հաջողվել նրան փրկել:

Նշենք, որ «Վերին Լարսի» անցակետը միակ ցամաքային ուղին է, որը կապում է Ռուսաստանը Վրաստանին և դրա միջով նաև Հայաստանին:

ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄ



ԶԱԶԱ ՓԱԶՈՒԼԻԱՆ՝ ՊԱՏԿՈ ՇՔԱՆՇԱՆԻ ԱՄՊԵՏ

Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին, միջազգային ասպարեզում Վրաստանի ներկայացմամբ էլ երկրի ժողովրդականացման համար, Վրաստանի բասկետբոլի հավաքականի ավագ, 33-ամյա Ջազա Փաչուլիային պարգևատրել է Պատվո շքանշանով:

Նշենք, որ ընթացիկ խաղաշրջանում Փաչուլիան, հանդես գալով «Գոլդեն սթեյթ ուոռիորս» թիմի կազմում, դարձավ բասկետբոլի ազգային ասոցիացիայի չեմպիոն և դարձավ առաջին վրացի մարզիկը, ում հաջողվեց հասնել նման մարզական բարձունքի: Նշենք, որ Ջազա Փաչուլիան հայրենիք եկավ բասկետբոլի ազգային ասոցիացիայի գավաթով:

ՆՈՐՈՒՅՑ

ՍԿՍՎՈՒՄ Է ԱՌԳՐԱՎՎԱԾ ԻՐԵՐԻ ՎԱՃԱՌՔԸ

Առգրավված իրերը կվաճառվեն էլեկտրոնային խանութում շուկայական արժեքի 80% արժողությամբ:

Վրաստանի Արդարադատության նախարարության Ազգային բյուրոն բացել է առգրավված գույքի առցանց խանութ, գրված է բաժնի www.nbe.gov.ge կայքում:

Ազգային բյուրոն առաջարկում է նոր սպասարկում - ինտերնետ խանութ: Կայքում կտեղադրվի առգրավված գույքը և կվաճառվի շուկայական արժեքի 80%-ի գներով:

Պարտքերի համար առգրավված գույքը կվաճառվի աճուրդով, իսկ էլեկտրոնային խանութ այն կընկնի մինչ այդ, պարտատիրոջ և պարտապանի համաձայնության դեպքում:

Իրը կցուցադրվի խանութում վաճառքից 5-8 օր առաջ:

ՖՈՒՏՐՈՒ

ԴԻՐՔԵՐԸ ՎԱՐԿԱՆԻՇԱՅԻՆ ՍԱՆԴՐԱՎՈՒՄ ՊԱՀՊԱՆՎԵԼ ԵՆ



Ֆուտբոլի միջազգային ֆեդերացիայի (ՖԻՖԱ) նոր դասակարգման աղյուսակում Վրաստանի հավաքականը պահպանել է 112-րդ տեղը, իսկ Հայաստանի ֆուտբոլի ազգային հավաքականն առաջադիմել է մեկ աստիճանով և զբաղեցրել 72-րդ տեղը:

ՖԻՖԱ դասակարգման աղյուսակի նոր առաջատարն է Բրազիլիայի հավաքականը, երկրորդ տեղը զբաղեցնում է աշխարհի գործող չեմպիոն Գերմանիան, իսկ աշխարհի փոխչեմպիոն Արգենտինան 3-րդ հորիզոնականում է:

«Վրաստան» թերթի խմբագրությունը, Թբիլիսիի Պետրոս Ադամյանի անվան պետհայրամայի թատրոնը խորապես ցավակցում են Հայաստանի Հանրապետության Սփյուռքի նախարար, մեծարգո տիկին Հրանուշ Հակոբյանին՝ սիրելի մոր՝

Թերեզա Դեբինիի ՕՂԱՅԱՆ-ՀԱՎՈՐՁԱՆԻ

մահվան կապակցությամբ և վշտակցություն հայտնում հանգուցյալի հարազատներին ու մերձավորներին:

Թբիլիսիի թիվ 104 հանրային դպրոցի տնօրինությունը, հոգաբարձուների խորհուրդը, մանկավարժական և աշակերտական կոլեկտիվները, խորապես վշտակցում են էլմիրա և Արկադի Սարգսյաններին՝ իրենց սիրելի որդու, թիվ 104 դպրոցի 10-րդ դասարանի սան՝



Ռոմա Արկադիի ՍԱՐԳՍՅԱՆԻ

ողբերգական մահվան առթիվ ու ցավակցում նրա հարազատներին:

Գազիկ Կարսլյանը, ընտանյոք հանդերձ, խորապես ցավակցում է Վրաստանի խորհրդարանի պատգամավոր Հենգել Սկոյանին՝ սիրելի հորաբորջ՝

Վեներա Բարդուղիմեոսի ՄՎՈՅԱՆԻ

մահվան կապակցությամբ:

Table with 6 columns and 10 rows containing numbers 1 through 52 in a grid pattern.

Large section with title 'Խ Ա Չ Բ Ա Ռ' and lists of numbers under 'ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ' and 'ՈՒՂԱՅԱՅՈՒՆ' categories.

Footer section with contact information for 'ՎԱՆ ԲԱՅՐՈՒՐԹՅԱՆ' and 'ՎՐԱՏԱՆ' in Tbilisi, Georgia.